ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

«____»______________ 20 թ.

№ _____________________

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0010, Տիգրան Մեծի 4
Հեռ.՝ (37411) 527 635, (37411) 523 706,
ֆաքս՝ (37411) 529 753

Հայաստանի Հանրապետության
տնտեսական զարգացման և ներդրումների նախարար
պարոն Ա.Մինասյանին

Հարգելի պարոն Մինասյան

Ի պատասխան Ձեր 2018 թվականի հունիսի 14-ի N 01/14.3/4401-18 գրության՝ Հայաստանի Հանրապետության և Բուլղարիայի Հանրապետության միջև աշխատանքային միգրացիայի կարգավորման մասին» համաձայնագրով (այսուհետ Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության համար գույքային պարտավորություններ նախատեսող դրույթների եզրակացություն տրամադրելու հետ՝ տեղեկացնում եմ, որ.

ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչությունը (այսուհետ Վարչություն) իրավասու է եզրակացություններ տրամադրել Հայաստանի Հանրապետության համար գույքային պարտավորություններ նախատեսող այն միջազգային պայմանագրերի դրույթների վերաբերյալ, որոնք վերաբերվում են պետական գույքի կառավարման, մասնավորեցման, պետական մասնակցությամբ ընկերությունների լուծարման և ֆինանսական առողջացման ոլորտներին՝ իր իրավասության սահմաններում:

Վարչության գործառույթները ելնում են <<Պետական գույքի կառավարման մասին>>, <<Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին>> ՀՀ օրենքներից և դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերից:

«Միջազգային պայմանագրերի մասին» 2018 թվականի մարտի 23-ի թիվ ՀՕ-213-Ն ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ շահագրգիռ մարմին(ներ)ը տրամադրում է(են) եզրակացություն միջազգային պայմանագրի նախագծի կամ բազմակողմ միջազգային պայմանագրի՝ օրենքով իրենց վերապահված գործունեության ոլորտին առնչվող հարցերի մասին, իսկ տվյալ դեպքում Համաձայնագրից չի հետևում, որ այն վերաբերում է օրենքով Վարչությանը վերապահված գործունեության ոլորտներին առնչվող հարցերին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Վարչությանը վերապահված լիազորությունների և գործունեության ոլորտներին առնչվող մասով Համաձայնագրով գույքային պարտավորություններ չեն առաջանում:

Հարգանքով՝

Վ.Գասպարյան

Պետական գույքի գրանցման և հաշվառման բաժին
Գ.Դավթյան (011) 52 68 87